ԼԱՐՅԱՆ

ՎՈԿԱԼ ԱՆՍԱՄԲԼ

ԼԱՒՐՅԱՆ

ՎՈԿԱԼ ԱՆՍԱՄԲԼ

ՆԱԻՐՅԱՆ ՎՈԿԱԼ ԱՆՍԱՄԲԼ

«Նաիրյան» վոկալ անսամբլը ստեղծվել է 2015 թ.-ին «Մուղդուսյան» արվեստի կենտրոնի մշակութային ծրագրերի շրջանակներում:

Նման անսամբլ ձևավորելու հիմքում եղել է հայ դասական կոմպոզիտորների ստեղծագործությունների հանրահռչակման միտումը, ազգային, դասական, հոգևոր և ավանդական երաժշտության տարածումը, ինչպես նաև կանանց հզորացումը:

Անսամբլի կազմում երգում են երիտասարդ, պրոֆեսիոնալ կին երաժիշտներ: Խումբը երգում է բազմաձայն երգեր, հիմնականում ակապելլայի ձևաչափով, կան կատարումներ, որոնք նվագակցվում են կլարնետով, դափով, երաժշտական այլ գործիքներով, որոնց տիրապետում են աղջիկները:

Անսամբլն ունեցել է բազմաթիվ մենահամերգներ, տասնյակ ելույթներ տարբեր միջոցառումների շրջանակներում, այդ թվում՝ Երևանի գրեթե բոլոր թանգարաններում, հոգևոր կենտրոններում, տուն-ինտերնատներում, քրեակատարողական հիմնարկներում՝ հավատալով, որ երաժշտության հասանելիությունը ամենուր հնարավոր է՝ անգամ այնպիսի վայրերում, որտեղ դա սովորական երևույթ կարող է և չընկալվել:

2018 թվականից անսամբլն իրականացնում է ներառական, իր տեսակի մեջ միակը ներկայացնող նախագիծ. բազմաձայն ստեղծագործությունների կատարմանը զուգահեռ՝ թարգմանելով երգը ժեստերի լեզվով: Ներկայումս ոչ միայն Հայաստանում, այլև ողջ տարածաշրջանում, «Նաիրյան» վոկալ անսամբլը միակն է, որ երգում է ակապելլա, բազմաձայն ստեղծագործություններ՝ միաժամանակ վերծանելով այն ժեստերի լեզվով՝ այդ կերպ հասանելի դառնալով լսողության խանգարումներ ունեցող անձանց համար:

«Նաիրյան» վոկալ անսամբլը մասնակցել է ներհայաստանյան և միջազգային մի շարք փառատոների՝ արժանանալով մրցանակների:

«Նաիրյան» վոկալ անսաբլի գեղարվեստական ղեկավարը Նաիրա Մուղդուսյանն է:

NAIRYAN VOCAL ENSEMBLE

Nairyan Vocal Ensemble was created in 2015 within the Mughdusyan Art Center's cultural programs.
The goal of creating such an ensemble was to popularize works of Armenian classical composers, spreading folk, classical, spiritual and traditional music, as well as empowering women.
The ensemble consists of young, professional female musicians. They sing polyphonic songs, mainly acapella. There are performances accompanied by clarinet and other musical instruments that the girls play.

The ensemble has had many solo concerts, dozens of performances within various events held in most museums in Yerevan, spiritual centers, retirement homes, penitentiary institutions, having strong faith that music can be available even in those places where usually listening to classical music isn't accepted.

Starting from 2018 the Ensemble has been implementing a very unique inclusive program. While performing polyphonic compositions, they also translate the song into sign language. Now Nairyan Vocal Ensemble is the only ensemble not only in Armenia but also in the whole region that performs acapella at the same time translating them into sign language, which makes songs available for people with listening disorders.

Nairyan Vocal Ensemble has participated in many festivals both in Armenia and beyond.

Naira Mughdusyan is the Artistic Director of the Ensemble.

1. ԳՈՒԼՈ

Ելա տանիս, թափ քելեցի,
Լանգով զարկի, երդիկ բացի,
Գուլոն տուն չէր, նստա լացի,
Վայ լե Գուլո, յաման Գուլո:
Գուլոն ելե, կերթա մարագ,
Հուր ուտելիք մեղր ու կարագ,
Հուր խմելիք ջուր սառնորակ,
Վայ լե Գուլո, յաման Գուլո:
Գուլոն ելէ, կերթա աղբյուր,
Ոչ դու էղնիր, ոչ քու պաղ ջուր,
Ընձի վառեց, քու սրտի հուր,
Վայ լե Գուլո, յաման Գուլո:

2. ԴՐԴՈ, ՅԱՐԻՄՈ, ՄԵՄԶԱՐԵ ԵՎ ԿԱՄԱՑ ՔՇԵՔ ՍԵԼԵՐԸ

Դրդո, տնավեր, քելե երթանք սարն ի Սասուն,
Ես էղնիմ տուն, դուն էղնիս սյուն, վախ,
Ես էղնիմ տուն, դուն էղնիս սյուն:
Դրդո, տնավեր, դու հագերիս կարմիր սոլեր,
Արի երթանք շաբաթ մը երկուս, մնանք չոլեր,
Արի երթանք շաբաթ մը երկուս, մնանք չոլեր:
Ախ, Դրդո, իմալ եղնիմ, Աստծու սիրուն,
Իմալ եղնիմ, Աստծու սիրուն,
Հորի չիդաս պաք մը անուշ, տնավեր, Դրդո,
Հորի չիդաս պաք մը անուշ, տնավեր, Դրդո:

Յարիմո, յարիմո,
Չիր ու չամիչ ու խարումա, ու խարումա,
Յարիմո, յարիմո:
Երթամ, քաղիմ վարդ, մանուշակ,
Վարդ, մանուշակ,
Յարիմո, յարիմո:
Բերիմ, դրիմ քու բարձի տակ,
Քու բարձի տակ,
Յարիմո, յարիմո:
Բերիմ, դրիմ քու բարձի տակ,
Քու բարձի տակ,
Յարիմո, յարիմո:

Յա՛ր, Մեմզարե, Մեմզարե,
Մեմզար սարեն իջեր է,
Յա՛ր, Մեմզարե, Մեմզարե,
Վարդ, մանուշակ բերեր է:
Յա՛ր, Մեմզարե, Մեմզարե,
Ապրոն առեջ գացեր է,
Յա՛ր, Մեմզարե, Մեմզարե,
Խորոտ յարին տեսեր է:

Կամաց քշեք սելերը,
Յար, յար, յարո, օյ, օյ,
Յար ջան, դու իմ տուն արի,
Յար, յար, յարո ջան:
Սարերի գլխովն արի,
Յար, յար, յարո, օյ, օյ,
Յար ջան, դու իմ տուն արի,
Յար, յար, յարո ջան:
Կրակը վառ ա, վառ ա,
Յար, յար, յարո, օյ, օյ,
Ես իմ սիրածին չառա,
Յար, յար, յարո ջան:

3. ՅԱՐԸ ՄԱՐԴՈՒՆ ՅԱՐԱ ԿՈՒՏԱ ԵՎ ՅԱՐ, ՅԱՐԱՆԸԴ ԷՂՆԻՄ

Յարը մարդուն յարա կուտա,
Շատ ուշ հասկացա,
Ժայռից պոկված սիրտը նրա,
Քնքուշ հասկացա:
Յարս ինձ չասաց. «Դեղ տամ վերքիդ, առ դիր, ո՛վ աշուղ,
Սեր երգելով սազը ձեռքիդ, վայր դիր, ո՛վ աշուղ»:
Երանի չոլերն ընկնեի,
Անտուն ու անտեր մնայի,
Սարի պես դարդ ունենայի,
Յար չունենայի:
Հազար տեսակ տանջանք կուտա վարդը բլբուլին,
Ով յար ունի, նա կիմանա դարդը բլբուլի:
Ես Հավասն եմ, սոխակի պես վշտերս եմ լալիս,
Սիրո հուրը իմ սրտակեզ,
Հանգիստ չի տալիս:
Երանի չոլերն ընկնեի,
Անտուն ու անտեր մնայի,
Սարի պես դարդ ունենայի,
Յար չունենայի:

Յար, յարանըդ էղնիմ,
Կուզես, հեյրանըդ էղնիմ:
Հով սարի տակ զով աղբյուր,
Յար յարանըդ էղնիմ,
Արծաթե թաս, ոսկե ջուր,
Կուզես, հեյրանըդ էղնիմ:
Յար, յարանըդ էղնիմ,
Կուզես, հեյրանըդ էղնիմ:
Խնձորը գլորել եմ,
Ճամփիցը մոլորվել եմ,
Իրեք տարի միալար,
Քու վրա սովորել եմ:
Յար, յարանըդ էղնիմ,
Կուզես հեյրանըդ էղնիմ:

4. ԼԵՅԼԸՄ ԼԵ, ԼԵ

Սասնա գեղեն երկու հարս,
Լեյլըմ լե լե, լեյլըմ լե լե,
Լե, լե, լե մայրո,
Մտել են գետ, կլողեն,
Սևուկ, սիրուն, շատ խորոտիկ,
Խորոտիկ մայրո:
Ելել են ափ, կդողեն
Լեյլըմ լե լե, լեյլըմ լե լե,
Լե, լե, լե մայրո,
Քանց նռան հատ կշողեն,
Սևուկ, սիրուն, շատ խորոտիկ,
Խորոտիկ մայրո:
Լեյլըմ լե լե, լեյլըմ լե լե,
Լե, լե, լե մայրո,
Սևուկ, սիրուն, շատ խորոտիկ,
Խորոտիկ մայրո:
Աղջի, անունդ Շուշան,
Լեյլըմ լե լե, լեյլըմ լե լե,
Լե, լե, լե մայրո,
Շորիկ ունիս խշխշան,
Սևուկ, սիրուն, շատ խորոտիկ,
Խորոտիկ մայրո:
Աղջի, քեզի բերի նուռ,
Լեյլըմ լե լե, լեյլըմ լե լե,
Լե, լե, լե մայրո,
Բարով գնանք ժամու դուռ,
Սևիկ, սիրուն, շատ խորոտիկ,
Խորոտիկ մայրո:

5. ԶՈՄԱ, ՔՈՄԱ

Զի՞նչ ու զի՞նչ տամ լողվորչուն,
Զոմա զոմա էր,
Զիմ գոտիկ տամ լողվորչուն,
Քոմա քոմա էր:
Ո՛չ էառ, ո՛չ հավնեցավ,
Զոմա զոմա էր,
Ո՛չ էհան ծամկալ ծովեն,
Քոմա քոմա էր:
Զի՞նչ ու զի՞նչ տամ լողվորչուն,
Զոմա զոմա էր,
Զիմ լաչակ տամ լողվորչուն,
Քոմա քոմա էր:
Ո՛չ էառ, ո՛չ հավնեցավ,
Զոմա զոմա էր,
Ո՛չ էհան ծամկալ ծովեն,
Քոմա քոմա էր:
Զի՞նչ ու զի՞նչ տամ լողվորչուն,
Զոմա զոմա էր,
Զիմ շապիկ տամ լողվորչուն,
Քոմա քոմա էր,

Ո՛չ էառ, ո՛չ հավնեցավ,
Զոմա զոմա էր,
Ո՛չ էհան ծամկալ ծովեն,
Քոմա քոմա էր:
Զի՞նչ ու զի՞նչ տամ լողվորչուն,
Զոմա զոմա էր,
Լուսնակ գիշեր պագ մի տվի,
Քոմա քոմա էր,
Հետ էառ, հետ հավնեցավ,
Զոմա զոմա էր,
Հետ էհան ծամկալ ծովեն,
Քոմա քոմա էր:
Զի՞նչ ու զի՞նչ տամ լողվորչուն,
Զոմա զոմա էր,
Զիմ ծոցիկ տամ լողվորչուն,
Քոմա քոմա էր,
Համ առա, համ հավնեցա,
Զոմա, զոմա էր,
Հանեմ ծամկալն ի ծովեն,
Քոմա, քոմա էր:

6. Ա՛Խ, ՏՆԱՎԵՐ ԵՎ ՄԱՐԱԹՈՒԿ ԲԱՐՁՐ ՍԱՐԵՆ

Արի երթանք սարն ի բլուր,
Ես էղնիմ հող, դու էղիր ջուր,
Ես էղնիմ հող, դու էղիր ջուր,
Օյ, օյ, օյ, լաճ տնավեր:
Արի երթանք սարն ի բլուր,
Ես էղնիմ քոլ, դու էղիր ջուր,
Ես էղնիմ քոլ, դու էղիր ջուր,
Օյ, օյ, օյ, լաճ տնավեր:
Արի երթանք ի վերին թաղ,
Ես էղնիմ թուփ, դու էղիր շաղ,
Ես էղնիմ թուփ, դու էղիր շաղ,
Օյ, օյ, օյ, լաճ տնավեր:

Մարաթուկ բարձր սարեն,
Լանջին պաղ-պաղ ջրեր,
Էրնեկ էն ջրէն խըմեմ,
Մատաղըս ոտքդ բերեմ,
Ձիմ մուրազ կատարե:
Ձորավոր զորքիդ մեռնեմ,
Խաս մարմարե քարեր,
Հեռու տեղից է կիգամ,
Հեռու տեղից է կիգամ,
Ձիմ մուրազ կատարէ:

7. ՎԱՅ ՍԱՐԻՆ, ՎԱՅ ՔԱՐԻՆ ԵՎ ԱՐԽԱԼՈՒՂԴ ՀԱԳԵԼ ԵՍ

Վա՛յ սարին, վա՛յ քարին,
Վա՛յ սիրահարին,
Եկել են, տանում են
Իմ սիրած յարին:
Հագել եմ, ալ եմ դառել,
Վա՛յ սարին, վա՛յ յարին,
Վա՛յ սիրահարին,
Սրտես հիլալ եմ դառել,
Ջոկել են, տանում են
Իմ սիրած յարին:
Ծաղիկ է բաղի միջին,
Վա՛յ սարին, վա՛յ յարին,
Վա՛յ սիրահարին,
Մի հատ է թաղի միջին,
Ջոկել են, տանում են
Իմ սիրած յարին:

Արխալուղդ հագել ես,
Լե լե, լե լե, լե՛ լե,
Պատրոն դաշդ կապել ես,
Դե քելե, դե ցոլա, ֆիդան յար:
Տղա, էրթանք մեր բաղչեն,
Լե լե, լե լե, լե՛ լե,
Բացեմ իմ սրտի բողչեն,
Դե քելե, դե ցոլա, ֆիդան յար:
Տղա, մեր բաղով արի,
Լե լե, լե լե, լե լե,
Ոտքերիդ շաղով արի,
Դե քելե, դե ցոլա, ֆիդան յար:

Ջ. ՋՈՒՐ ԿՈՒԳԵՐ

Ջուր կուգեր վերին սարեն,
Հայ, լայ, լալա, ռատիրիրի ռարիրա,
Գեր թափեր մարմար քյարեն,
Հայ, լայ, լալա, ռատիրիրի ռարիրա:
Յար կուգեր թռվռալեն,
Հայ, լայ, լալա, ռատիրիրի ռարիրա,
Ջուր կուգեր գլգլալեն,
Հայ, լայ, լալա, ռատիրիրի ռարիրա:

Ջուր կուգեր վերին սարեն,
Հոպ, լայ, լալա, ռատիրիրի ռարիրա,
Գեր թափեր մարմար քյարեն,
Հոպ, լայ, լալա, ռատիրիրի ռարիրա:

Սարեն կուգեր ձիավոր,
Արծվու պես թևավոր:
Սարեն կուգեր թուխ Ասմին,
Արևու շողն իրեսին:

9. ԼՈՒՍՆՅԱԿՆ ԻՋԱՎ ՍԱՐԻ ՏԱԿ ԵՎ ԱՅ ՏՂԱ, ՀԱԼ ՈՒ ՄԱՇ ԵՄ

Լուսնյակն իջավ սարի տակ,
Կաքավը թռավ, արտերս ե՞րբ եմ հնձելու,
Քունն անուշ է ծառի տակ,
Վախենամ քնեմ, խոր քնով ընկնեմ,
Արտերս մնան հնձելու:

Արտը լիքը ցորենով,
Կաքավը թռավ, արտերս մնաց հնձելու,
Քեզ չեմ տեսնում օրերով,
Վախենամ քնեմ, խոր քնով ընկնեմ,
Արտերս մնան հնձելու:

Այ տղա, հալ ու մաշ եմ,
Յար, մտքիդ մեռնիմ, յար, միտքդ ծուռն է,
Երեք տարի կկանչեմ,
Յարս կտուրն է, աչքը մեր դուռն է:
Սիրտս սուփրա չէ՝ բանամ,
Յար, մտքիդ մեռնիմ, յար, միտքդ ծուռն է,
Ես ո՞ր դարդին դիմանամ,
Յարս կտուրն է, աչքը մեր դուռն է:
(Կրկնակ)
Յար, մտքիդ մեռնիմ,
Յար, միտքդ ծուռն է,
Յարս կտուրն է,
Աչքը մեր դուռն է:

10. ԳՈԼԵ, ՀՈՅ ՆԱՐ ԵՎ ԹԱՄԶԱՐԱ

Գոլե, հոյ նար, հոյ նար, հոյ նար, նար,
Գոլե, հոյ նար, հոյ նար, հոյ նար, նար:
Գոլեն կայներ դեմ աղոթրան,
Գոլե, հոյ նար, հոյ նար, հոյ նար, նար,
Կարմիր հիրես էրուն կաթան,
Գոլե, հոյ նար, հոյ նար, հոյ նար, նար,
Գոլեն իլիր կայներ ի դուռ,
Գոլե, հոյ նար, հոյ նար, հոյ նար, նար,
Մեջքն ի բարակ խանջարի բուռ,
Գոլե, հոյ նար, հոյ նար, հոյ նար, նար,
Գոլե, հոյ նար, հոյ նար, հոյ նար,
Գոլե, հոյ նար, հոյ նար, հոյ նար նար:

Թամզարա, հա՛յ, թամզարա,
Թամզարա, հա՛յ, թամզարա,
Թամզարա, հա՛յ, թամզարա,
Թամզարա, հա՛յ, թամզարա,
Աղչի դու լուսնակ էրես,
Թամզարա, հա՛յ, թամզարա,
Ինչ կեղնի ընձի սիրես,
Թամզարա, հա՛յ, թամզարա լե, լե, լե, լե, թամզարա,
Թամզարա, հա՛յ, թամզարա, լե, լե, լե, լե, թամզարա,
Թամզարա, հա՛յ, թամզարա,
Կաքավ թռավ մեր արտեն,
Թամզարա, հա՛յ, թամզարա,
Կտրավ իմ խաղի ղայդեն,
Թամզարա, հա՛յ, թամզարա:
Թամզարա, հա՛յ, թամզարա,
Թամզարա, հա՛յ, թամզարա,
Թամզարա, հա՛յ, թամզարա,
Թամզարա, հա՛յ, թամզարա, լե, լե, լե, լե, թամզարա
Թամզարա, հա՛յ, թամզարա, լե, լե, լե, լե, թամզարա,
Թամզարա, հա՛յ, թամզարա,
Թամզարա, հա՛յ, թամզարա,
Թամզարա, հա՛յ, թամզարա,
Թամզարա, հա՛յ, թամզարա,
Թամզարա, հա՛յ, թամզարա:

11. ՀԱՆԱՆԵ

Մի յար ունիմ՝ անուշա, հով, հով, հովն ընկավ,
Անուշա, թառլան ղուշա, սարին սովոր իմ յար ջան:
Հանանե, հանանե, հանանե ջան,
Հանանե, հանանե, հանանե ջան:
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես թռավ ջուրն ընկավ:
Սև ամպը սարի գլխին, հով, հով, հովն ընկավ,
Կաքավը քարի գլխին, սարին սովոր իմ յար ջան:
Հանանե, հանանե, հանանե ջան,
Հանանե, հանանե, հանանե ջան:
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես թռավ ջուրն ընկավ:

12. ԳՈՐԱՆԻ

Ըդ Մշո դաշտ, կըսին, հինգ հարիր գեղ էր,
Ըդ Մըղրագետք, կըսին, հիվընդի դեղ էր,
Յար է, հո՛, յար է, հո՛, յարըմ գորանի,
Յար է, հո՛, յար է, հո՛, Մշո գորանի:

Ցորյան իմ ցանիլ իմ առվի պռնգան,
Էլիլ է, ծգվիլ է դեպ արեգական,
Յար է, հո՛, յար է, հո՛, յարըմ գորանի,
Յար է, հո՛, յար է, հո՛, Մշո գորանի:

Ըդ քամբախ Մշո դաշտ ինչ անուշ տեղ էր,
Ըդ քամբախ Մըղրագետք հիվընդի դեղ էր:
Յար է, հո՛, յար է, հո՛, յարըմ գորանի,
Յար է, հո՛, յար է, հո՛, Մշո գորանի:

Էկիլ ես մըր բաղչեն խաղող կքաղիս,
Քո շարմաղ թաթերով նեկտար կըշաղիս:
Յար է, հո՛, յար է, հո՛, յարմ գորանի,
Յար է, հո՛, յար է, հո՛, Մշո գորանի:

1. Գուլո
2. Դրդո, Յարիմո, Մեմզարե և Կամաց քշեք սելերը
3. Յարը մարդուն յարա կուտա և Յար, յարանդ էղնիմ
4. Լեյլըմ լե, լե
5. Զոմա, քոմա
6. Ախ, տնավեր և Մարաթուկ բարձր սարին
7. Վայ սարին, վայ քարին և Արխալուղդ հագել ես
8. Ջուր կուգեր
9. Լուսնյակն իջավ սարի տակ և Այ տղա, հալ ու մաշ եմ
10. Գոլե, հոյ նար և Թամզարա
11. Հանանե
12. Գորանի
13. Շարան

1. Gullo
2. Drdo, Yarimo, Memzare and Kamats Kshek Selery
3. Yar Mardun Yara Kuta, Yar, Yarand Eghnim
4. Lyleum Leh, Leh
5. Zoma, Koma
6. Akh, Tnaver Maratuk Bardzr Sarin
7. Vay Sarin, Vay Karin, Arkhalughd hagel es
8. Jur Kuger
9. Lusnakn Ijav Sari Tak and Ay Tgha, Hal u Mash em
10. Gole, Hoy Nar and Tamzara
11. Hanane
12. Gorani
13. Sharan

ՆԱԻՐՅԱՆ ՎՈԿԱԼ ԱՆՍԱՄԲԼ
Գեղարվեստական ղեկավար՝ Նաիրա Մուղդուսյան

«Նարեկացի» արվեստի միություն
Երևան, 2023

Գրաֆիկ դիզայներ՝ Մարգարիտա Տեր-Գրիգորյան
Հնչյունային օպերատոր՝ Գարեգին Ամյան
Թարգմանիչ և սրբագրիչ՝ Մարինե Հարությունյան
Լուսանկարիչ՝ Մովսես Սմբատյան
Գործադիր պրոդյուսեր՝ Նարեկ Յարութիւնեան

«Նաիրյան» վոկալ անսամբլը խորին շնորհակալություն է հայտնում «Նարեկացի» արվեստի միության ողջ անձնակազմին և հիմնադիր նախագահ Նարեկ Յարութիւնեանին այս ձայնասկավառակի լույսընծայման համար:

© «Նաիրյան» վոկալ անսամբլ, 2023
© ℗ «Նարեկացի» արվեստի միություն, 2023

ISBN 978-9939-9283-8-8

NAIRYAN VOCAL ENSEMBLE
Artistic Director: Naira Mughdusyan

Naregatsi Art Institute
Yerevan 2023

Graphic Designer: Margarita Ter-Grigoryan
Sound Engineer: Garegin Amyan
Translation and proofreading by Marine Harutyunyan
Photographer: Movses Smbatyan
Executive Producer: Nareg Hartounian

Nairyan Vocal Ensemble would like to express their deepest gratitude to the Naregatsi Art Institute entire staff and the Founder-President Nareg Hartounian for the release of this CD-album.

© Nairyan Vocal Ensemble, 2023
© ℗ Naregatsi Art Institute, 2023

ISBN 978-9939-9283-8-8

ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

NAREGATSI ART INSTITUTE

ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ